ՀՏԴ 346

Ռազմագիտություն

Ազատ ԴԱՎԹՅԱՆ
ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան, Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի պետի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, Երևան

Արթուր ՔԱՄԱԼՅԱՆ
ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան, Ռազմահումանիտար գիտությունների հետազոտությունների կենտրոն, ավագ գիտնական-վերլուծաբան, Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԻ ՕՐԵՆՍԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Սույն հոդվածում կարևորվում է ՀՀ տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի անհրաժեշտությունը, ինչը բխում է մեր երկրի ազգային անվտանգային շահերից: ՀՀ-ի շուրջ տուրբուլենտ անվտանգային միջավայրից բխող սպառնալիքները ստիպում են ապահովել ՀՀ տնտեսական առաջադեմ զարգացում, որին հնարավոր է հասնել տնտեսության զորահավաքային նախապատրաստության կառավարման առաջադեմ համակարգի միջոցով: Հոդվածում փորձ է արվում վեր հանել ՀՀ տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի կազմակերպման և օրենսդրաիրավական կարգավորման հիմնահարցեր և առաջարկել դրանց լուծման ուղղություններ:

Յուրաքանչյուր օրենսդրահիրավական փոփոխություն պետք է հիմնավորվի տնտեսության զորահավաքային ներուժի ավելացման և դրա իրացման քաղաքականության հիմնական նպատակներով:

Բանալի բառեր՝ ազգային անվտանգություն, զորահավաքային նախապատրաստություն, զորահավաք, օրենսդրահիրավական կարգավորում, տնտեսական զարգացում, բյուջետային ծախսեր, պետական կառավարում:

А.Давтян, А. Камалян

В данной статье подчеркивается необходимость военно-мобилизационной подготовки и военно-мобилизационной подготовки экономики РА, что вытекает из интересов национальной безопасности нашей страны. Угрозы, возникающие в связи с нестабильной обстановкой безопасности вокруг РА, делают необходимым обеспечение поступательного экономического развития РА, что может быть достигнуто за счет развитой системы управления военно-мобилизационной подготовки экономики. В статье предпринята попытка поднять вопросы организации и законодательного мобилизационной подготовки и мобилизации экономики и предложить направления их решения. Каждое законодательное и изменение должно быть обосновано основными задачами политики повышения и реализации мобилизационного потенциала экономики.

Ключевые слова: *национальная безопасность, призывная подготовка, призыв на военную службу, законодательное регулирование, экономическое развитие, бюджетные расходы, государственное управление*

A.Davtyan, A. Qamalyan

In this article, the need for military mobilization preparation and military mobilization of the RA economy is highlighted, which stems from the national security interests of our country. The threats arising from the turbulent security environment around RA make it necessary to ensure the progressive economic development of RA, which can be

achieved through an advanced system of managing the economy's military preparations. In the article, an attempt is made to raise the issues of mobilization preparation and mobilization of economy and offer directions of their solution. Every legislative amendment should be justified by the main objectives of the policy of increasing and realizing the mobilization potential of the economy.

Key words: *national security, conscription preparation, conscription, legislative regulation, economic development, budget expenditures, state administration*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անվտանգային սպառնալիքների առջև կանգնած յուրաքանչյուր երկրի համար զորահավաքային նախապատրաստությունը և զորահավաքը կարևորագույն նշանակություն ունեն: Տնտեսության զորահավաքային նախապատրաստությունը և զորահավաքը դրա անբաժանելի մասն է, առանց որի հնարավոր չէ ապահովել պատերազմի կարիքների բավարարումը: Այս առումով, 2020 թ. Արցախյան պատերազմը վերհանեց տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի իրականացման թերացումները, որոնց մի մասը կապված են օրենսդրահիրավական դաշտում առկա բացթողումների հետ: Սույն հոդվածում ներկայացվում են Հայաստանի տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի օրենսդրահիրավական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները: Հոդվածում վերլուծվում են տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի իրականացման գործում պետական կառավարման բացերը, ինչպես նաև ներկայացվում են առաջարկություններ՝ օրենսդրական կարգավորումների դաշտում:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԻ ՕՐԵՆՍԴՐԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Տնտեսության զորահավաքային նախապատրաստությունը և զորահավաքը տնտեսության վերակառուցման արտակարգ գործընթաց է, որն իրագործվում է պատերազմական ժամանակի կարիքներին տնտեսությունը հարմարեցնելու նպատակով: Ըստ էության, դա տնտեսության բոլոր ճյուղերի, միավորումների, կազմակերպությունների և ձեռնարկությունների պլանաչափ անցումն է պատերազմական իրա-

վիճակում աշխատակարգի՝ նպատակաուղղված սպառազինությունների, զինամթերքի, տեխնիկայի, նյութական միջոցների նկատմամբ պետության պաշտպանական պահանջմունքների համակողմանի բավարարմանը, պետության բնակչության կենսապահովմանը, ինչպես նաև պատերազմական իրադրության պետության այլ կարիքների բավարարմանը[1]: Հաշվի առնելով պատմական փորձը՝ բոլոր խոշոր երկրները նախապես իրականացնում են տնտեսության զորահավաքային նախապատրաստության տարբեր միջոցառումներ, որպեսզի ամրապնդեն իրենց ռազմատնտեսական ներուժը և, անհրաժեշտության դեպքում, ապահովեն ռազմական դոկտրինին համապատասխան դրա իրականացումը[2]:

Ինչպես պարզ է դառնում զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի էությունից՝ այդ գործընթացը ենթադրում է բազմաոլորտ միջոցառումներ: Այս առումով, այլ երկրների զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի իրականացման մոտեցումների տեսանկյունից ուշադրության է արժանի ԱՄՆ-ի օրինակը, որտեղ զորահավաքային գործողություններն իրականացվում են հետևյալ ոլորտներում.

- **Իրավական իշխանություններ.** զորահավաքային միջոցառումների իրականացումը պահանջում է իրավական մակարդակում համապատասխան մարմինների գործողություններ: Մասնավորապես, համապատասխան մարմինները պետք է սահմանեն արտակարգ դրության մակարդակը, որ պետք է կիրառվի:
- **Ֆինանսավորում.** անհրաժեշտ է ապահովել բավարար ֆինանսավորում, ինչը պետք է ուղղվի համապատասխան պարտավորությունների իրականացմանը, և կարող է անհրաժեշտ է լինել այդ միջոցները ուղղել նաև զորահավաքի իրականացմանը:
- **Շրջակա միջավայր.** զորահավաքի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա պետք է գնահատվի:
- **Մարդկային ռեսուրսներ.** ռազմական և քաղաքացիական մարդկային ռեսուրսների ներգրավման հնարավորությունները պետք է ճշգրտվեն: Խոսքը վերաբերում է պահուստային զինվորականներին, թոշակառու զինվորականներին, կամավորներին, քաղաքացիական անձնակազմին, պայմանագրայիններին և այլն:
- **Նյութեր և սարքավորումներ.** զորահավաքի պլանավորողները պետք

---

[1] Տես՝ *Мобилизационная подготовка и мобилизация, https://beluprdor.ru/deyatelnost1/mobilizacionnaya-podgotovka/*

[2] Տես՝ ***Леонович А. Н., Тихонович Н. С.**, Экономическая мобилизация: сущность, тенденции в период первой и второй мировых войн.*

է որոշեն նյութերի և սարքավորումների նկատմամբ պահանջարկը՝ կանխատեսվող պակասուրդի լրացման կամ համապատասխան գերակայությունների համաձայն՝ նյութերի և սարքավորումների վերաբաշխման պահանջից ելնելով:

Ø **Տրանսպորտ.** տրանսպորտային միջոցների մոբիլիզացման տարբերակները պետք է ճշգրտվեն:

Ø **Սարքերով, սարքավորումներով, շենքերով և շինություններով ապահովածություն.** մոբիլիզացիային մասնակցող անձնակազմին տեղավորելու, մարզելու, սարքավորումներով ապահովելու և աջակցելու հնարավորությունները պետք է ճշգրտվեն: Պետք է հաշվի առնվեն նաև չօգտագործված հնարավորությունների օգտագործումը, արտակարգ ռազմական շինարարական նախագծեր սկսելու հնարավորությունը և նոր օբյեկտների ստեղծումը:

Ø **Արդյունաբերական բազա.** զորահավաքը պլանավորողները պետք է սահմանեն արդյունաբերական բազայի ընդլայնման և արագացված արտադրության պահանջները: Այս հարցում լրացուցիչ ֆինանսավորման կարիք կարող է առաջանալ:

Ø **Վերապատրաստման բազա.** զորահավաքը պլանավորողները պետք է սահմանեն վերապատրաստման բազայի ընդլայնման պահանջները: Սա լրացուցիչ կերպով ազդելու է մարդկային ռեսուրսների, նյութական ռեսուրսների և սարքավորումների, առողջապահական ծառայությունների և ֆինանսական ռեսուրսների վրա:

Ø **Առողջապահական ծառայություններ.** զորահավաքի ընթացքում անհրաժեշտ է լինելու բժշկական օգնության, հիվանդների տարհանման ծառայությունների իրականացում: Անհրաժեշտ է լինելու հաշվարկել լրացուցիչ բժշկական մահճակալների պահանջարկը:

Ø **Հաղորդակցություններ.** անհրաժեշտ է որոշել հաղորդակցությունների նկատմամբ պահանջարկը: Սա պետք է իրականացվի մասնավոր հատվածի հետ համագործակցության շրջանակներում՝ երաշխավորելու ռազմական գործողությունների շարունակականությունը և հեռահաղորդակցային համակարգերի անվտանգությունը:

Ø **Դաշնակից և գործընկեր պետությունների աջակցություն.** պետական մարմինները պետք է ստեղծեն այլ երկրների հետ փոխադարձ օգնության, պաշտպանական համագործակցության մեխանիզմներ կամ կընքվեն ռազմական գնումների և փոխադարձ ծառայությունների մատուցման պայմանագրեր[1]:

---

[1] *Տես՝ Joint Publication 4-05 Joint Mobilization Planning (https://www.jcs.mil/Portals/36/Documents/Doctrine/pubs/jp4_05.pdf). 23 October 2018:*

Պետք է նշել, որ թվարկվածներից իրավական կարգավորումները հանդիսանում են մնացած բոլոր միջոցառումների հաջող իրականացման գրավականը: Ինչ վերաբերում է բուն տնտեսական ոլորտում զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի միջոցառումներին, ապա դրանց արդյունավետությունը և նպատակայնությունը ուղղակիորեն կախված են համապատասխան օրենսդրահիրավական բազայի առկայությունից:

Պետք է նշել, որ ՀՀ-ում դեռևս օրենսդրահիրավական դաշտում սահմանված չէ տնտեսության զորահավաքային նախապատրաստությունը և տնտեսության զորահավաքը: Այս համատեքստում, տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի կազմակերպահիրավական բազան պետք է բխեցվի տնտեսական անվտանգության հայեցակարգից, որը, ինչպես գիտենք, ՀՀ-ում մշակված չէ: Իր, հերթին, տնտեսական անվտանգության հայեցակարգը պետք է մշակվի՝ ելնելով ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից, որը կարիք ունի լուրջ փոփոխությունների 2020 թ. Արցախյան պատերազմից հետո: Այս համատեքստում, պետք է հաշվի առնել, որ այդ պատերազմը մեծ հարված հասցրեց Հայաստանի տնտեսական ներուժին, ինչը ուղղակիորեն ազդում է մեր երկրի տնտեսական անկախության վրա: Արդյունքում՝ սահմանափակվում են Հայաստանի տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հնարավորությունները: Իրավիճակը կարող է բարելավվել Հայաստանի ապաշրջափակման և կառավարության օտարերկրյա ներդրումների ներգրավման ակտիվ քաղաքականության դեպքում: Ներդրումների ներգրավման համատեքստում պետական քաղաքականության վարման օրենսդրահիրավական դաշտում պետք է կարևորել Հայաստանի մարզային համայնքներում ներդրումների բաշխվածության նպատակով պետական աջակցության մեխանիզմների ընդլայնումը:

ՀՀ-ում չկա զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի (այդ թվում՝ տնտեսության ոլորտում) իրականացման պետական բյուջեի մասին փաստաթղթում առանձնացված հոդված: Սրա առկայության կարևորությունը կայանում է նրանում, որ սպառնալից կամ բուն պատերազմի ժամանակ անհրաժեշտ է նախօրոք «Պետական բյուջեի մասին» օրենքում փոփոխությունների միջոցով պետական բյուջեի նախագծում ունենալ զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի միջոցառումներին հատկացված ֆինանսական ռեսուրսներ՝ առանձնացված բյուջետային այլ ծախսերից: Այդպիսով հնարավոր կլինի տնտեսության

զորահավաքի ընթացքում խուսափել բյուջետային ծախսերի շատ հաճախ հապճեպ և անհիմն վերաբաշխումներից, որոնք կարող են վտանգել երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական կայունությունը: Հետևաբար, պետական բյուջեավորման գործընթացի օրենսդրահիրավական կարգավորումներում նպատակահարմար է կարևորել վերոնշյալ խնդրի իրականացումը: Սա, մյուս կողմից, ինչպես ցույց տվեց 2020 թ. Արցախյան պատերազմը, պետք է ուղեկցվի «պլանավորում-ծրագրավորում-բյուջետավորում-կատարում/գնահատում» համակարգի պարտադիր կիրառման օրենսդրահիրավական պահանջով: Խնդիրը կայանում է նրանում, որ զորահավաքային միջոցառումների ծախսերը նույնպես պետք է իրականացվեն ծրագրային բյուջեավորման միջոցով: Վերջինս օգտագործվում է գործառնական պահանջները ֆինանսական պարտավորությունների հետ կապելու և ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետության մակարդակը բարձրացնելու համար: Այդ համակարգի շրջանակներում գնահատվում է առկա ռեսուրսների՝ դրված պահանջներին համապատասխանությունը, և արդյո՞ք առանձին ծրագրերը ապահովում են ակնկալվող արդյունքներ: Ընդ որում՝ ավելի մեծ շեշտ է դրվում կատարողականի արդյունքների, քան բյուջեավորման միջոցների գնահատմանը:

Պետք է նշել, որ տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի օրենսդրահիրավական կարգավորման գործում կենտրոնական տեղ է զբաղեցնում տնտեսական սուբյեկտների միջև իրավունքների և պարտականությունների հստակ բաշխումը: Մասնավորապես՝ ՀՀ-ի օրենսդրահիրավական դաշտում ըստ խնդիրների՝ տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի միջոցառումների ֆինանսական ապահովման գործում մասնավոր հատվածի դերը ճշգրտված չէ: Խոսքն այն մասին է, որ այդ միջոցառումների իրականացման գործում անհրաժեշտ է ապահովել մասնավոր հատվածի տարբեր ոլորտների (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, բարձր տեխնոլոգիա, վառելիքաէներգետիկ համալիր և այլն) ձեռնարկությունների ֆինանսական ներգրավման կանոնակարգումը: Դա թույլ կտա խուսափել խուճապարար գործողություններից և նպաստել մասնավոր ձեռնարկությունների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությանը:

Տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի իրականացման գործում ռազմաարդյունաբերական ոլորտը զբաղեցնում է առանցքային դեր: Ռազմաարդյունաբերության ոլորտում *պետություն-մասնավոր հատված* գործընկերության շրջանակներում կողմերի

իրավունքների և պարտականությունների օրենսդրահիրավական կարգավորման կարևորագույն մասերից է տեխնոլոգիաների տրանսֆերի ապահովումը: Այս առումով, բավականին օգտակար է ԱՄՆ-ի փորձի դիտարկումը: Օրինակ՝ ԱՄՆ-ի անընդհատ կատարելագործվող նորմատիվ-իրավական բազան ոչ միայն սահմանել է համաշխարհային շուկայում ազգային մրցունակության բարձրացմանը վերաբերող պետական-մասնավոր փոխազդեցության մեխանիզմները, այլ նաև դարձել է դրանց իրագործման և հետագա զարգացման սկզբունքային նոր ենթակառուցվածքի ձևավորման հիմք[1]: Այս համատեքստում, հայրենական ռազմաարդյունաբերական արտադրանքի մրցունակության բարձրացման ուղղությամբ գրավականներից պետք է լինի ռազմարդյունաբերական արտադրանքի թողարկման նպատակով այլ երկրներից արտոնագրերի ձեռքբերման ուղղությամբ պետական քաղաքականության իրականացումը: Բանն այն է, որ արտոնագրերի ստացումը շատ դժվար գործընթաց է: Հայաստանը, լինելով փոքր շուկա, չի կարող ապահովել արտադրական մեծ ծավալներ: Մյուս կողմից, նոր արտոնագրերը շատ թանկ են, իսկ հին արտոնագրերով արտադրությունը բերում է նրան, որ թողարկված ապրանքը ուղղակի կարող է չվաճառվել միջազգային շուկայում: Այս առումով, եթե հնարավոր լինի ձեռք բերել նոր արտոնագրեր այն պայմանավորվածությամբ, որ թողարկված արտադրանքը վաճառվելու է արտոնագիր վաճառող երկրում, ապա այդպիսի գործունեությունը կլինի արդյունավետ: Այս առումով, այդպիսի միջոցառումները պետք է ստանան օրենսդրահիրավական ամրագրում:

Տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի իրականացման գործում չափազանց կարևորվում է բոլոր մակարդակների բարձր որակավորում ունեցող կառավարիչների դերը: Նրանք պետք է տիրապետեն հիերարխիկ մակարդակում ռեսուրսների կառավարման ընթացակարգերին: Հակառակ դեպքում, դրանք բերում են խնդիրների մեծացման, որը փոխակերպվում է ավելի բարձր ծախսերի: Միաժամանակ, պետական օրենսդրահիրավական կարգավորման բոլոր մակարդակներում անհրաժեշտ է ռեսուրսների օպտիմալ օգտագործման նպատակով անձնակազմի պատասխանատվության ինստիտուտի ներդնում և դրանից բխող գործողությունների հստակ սահմանում[2]:

Տնտեսության զորահավաքային ներուժի մյուս կարևոր հենասյունը տարածքային համաչափ զարգացվածության ապահովումն է: Այդ

---

[1] *Տես՝ **Д. Б. Изюмов, Е. Л. Кондратюк**, Зарубежный опыт коммерциализации инновационных технологий, Иннованика и экспертиза, 2017. Выпуск 1 (19).*

[2] *Տես՝ **Florin Eduard Grosaru**, Performance evaluation elements within defense resources management.*

նպատակով, պետական քաղաքականությունը պետք է իրականացվի Հայաստանի տարածաշրջաններում նոր աշխատատեղերի ստեղծմամբ, քանի որ դա հանդիսանում է տարածքային զարգացման անհրաժեշտ և բավարար պայմանը: Պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը ինքնին նպաստելու է տարածքային համաչափ զարգացմանը, քանի որ արտադրական հզորությունների ստեղծումը ինքնին տեղի է ունենալու Հայաստանի տարբեր մարզերում և համայնքներում: Պետական օրենսդրահիրավական մակարդակով կարելի է նաև խրախուսել դեպի Հայաստանի մարզեր տեղական ձեռնարկությունների մասնաճյուղերի և արտադրությունների տեղափոխումը: Իհարկե, տարածքային զարգացումը հնարավոր չէ առանց ենթակառուցվածքների զարգացման: Նոր աշխատատեղերի ստեղծումը ինքնին կբարձրացնի այդ ենթակառուցվածքների ստեղծման կամ նորոգման անհրաժե-շտությունը: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է օրենսդրահիրավական դաշտում մշակել Հայաստանի տնտեսության զորահավաքային ներուժի զարգացման գործում ռեգիոնների մասնակցության նորմատիվ պարամետրերը: Խոսքը վերաբերում է նրան, որ պետական մակարդակում հստակ պատկերացում կազմվի յուրաքանչյուր ռեգիոնի և, նույնիսկ, համայնքի արտադրական և ծառայությունների մատուցման հնարավորությունների մասին:

ՀՀ-ում տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի իրականացման արդյունավետության մակարդակը կբարձրանա ներքին շուկայական պահանջարկի բավարարման համար մասնավոր ձեռնարկությունների թողարկած առաջին անհրաժեշտության ապրանքների ու տեխնիկատեխնոլոգիական ավելցուկային բազայի և դրա առավելագույն տեղաբաշխվածության ապահովման դեպքում հենց մասնավոր ձեռնարկությունների կողմից: Այս միջոցառմանը անհրաժեշտ է տալ օրենսդրահիրավական ամրագրում: Այդպիսով՝ պատերազմի ժամանակ հնարավոր կլինի զսպել ապրանքների գների սպեկուլյատիվ աճը, մյուս կողմից՝ խուսափել պետական մարմիններում նյութական պահուստների կենտրոնացված կառավարումից: Իհարկե, ՀՀ-ում գործում է «Պետական նյութական պահուստի մասին» օրենքը, որում նշված է պետական պահուստի նշանակության և տեղաբաշխվածության մասին դրույթներ, սակայն այստեղ խոսքը պետական պահուստի նյութական արժեքները պաշտպանական, արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտա-յին և այլ կազմակերպությունների՝ անկախ դրանց կազմակերպաիրավա-կան ձևից պատասխանատու պահպանման հանձնելու մասին է[1]:

---

[1] *Տես՝ «Պետական նյութական պահուստի մասին» ՀՀ օրենք, 2004, https://www.arlis.am/documentview.aspx?docid=1678*

Բացի դրանից՝ ՀՀ-ում տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի կազմակերպահիրավական հիմքերի կատարելագործման շրջանակներում պետք է կարևորեն նաև հետևյալ միջոցառումները.

ü արտակարգ օրենսդրության մշակում և կատարելագործում,

ü մասնավոր ոլորտում գործունեության պետական կարգավորման ֆինանսավարկային լծակների կատարելագործում,

ü արտակարգ շրջանում տնտեսությունը կառավարող մարմինների համակարգի նախապատրաստում, ղեկավար կադրերի ռեզերվի ստեղծում,

ü առավել կարևոր արտադրանքի մատակարարների ընտրություն և նրանց հետ պայմանագրերի վաղօրոք կնքում, ռազմական պատվերների տեղաբաշխման ավտոմատացված համակարգի ստեղծում,

ü արդյունաբերական ու պարենային ապրանքի նորմավորված բաշխման համար քարտերի, ինչպես նաև զորահավաքի մեկնարկման մասին տնտեսության տարբեր ոլորտների և բնակչության համար ծանուցումների և ուղեգրերի նախապատրաստում,

ü զինված ուժերի և տնտեսության փոխգործության կատարելագործման նպատակով հատուկ վարժանքների պարբերական անցկացում:

Մեկ այլ կարևոր խնդիր է տնտեսության զորահավաքային նախապատրաստության փուլում ինժեներական և մեխանիկական մասնագիտություններով բուհերի շրջանավարտների գործնական պարապմունքների ինտենսիվ կազմակերպումը ՀՀ տեղական ձեռնարկություններում: Սա կնպաստի նրան, որ պատերազմի դեպքում տնտեսության զորահավաքի ընթացքում տնտեսության տարբեր ոլորտները ապահոված կլինեն բավարար թվով անհրաժեշտ կադրերով: Դրա ապահովման համար կրկին անհրաժեշտ է փոփոխություններ իրականացնել պետական օրենսդրահիրավական դաշտում:

Տնտեսության զորահավաքային կարողությունների ընդլայնման տեսանկյունից անհրաժեշտ է ապահովել հավելյալ ֆինանսական միջոցներ և խթանել տեղական ձեռնարկությունների գործարարությունը: Այս համատեքստում, Հայաստանում տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի իրականացման օրենսդրահիրավական դաշտում նպատակահարմար է ապահովել նաև.

Ø Կենսաթոշակային հիմնադրամներում կուտակված միջոցների որոշակի մասի ուղղում երկակի նախանշանակման ապրանքների ու տեխնոլոգիաների և առաջին անհրաժեշտության ապրանքատեսակների արտադրության, դեղերի, դեղամիջոցների, ինչպես նաև բժշկական սարքավորումների ձեռքբերման ֆինանսավորմանը: Այդ գումարները

կարող են նաև ուղղվել բնակչության տարհանման և քաղաքացիական պաշտպանության այլ միջոցառումների իրականացմանը,

Ø Մաքսատուրքերից, շրջանառության հարկի, ավելացված արժեքի հարկի վճարումից ՀՀ-ում գործող այն ընկերություններին ազատում, որոնք ներկրում են ռազմական և քաղաքացիական նշանակության առաջնային կարևորության ապրանքներ կամ դրանց արտադրության համար արտադրական հոսքագծեր: Օրենսդրահիրավական այդպիսի կարգավորումը պետք է տարածվի նաև զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների վրա:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև ՀՀ-ում զորահավաքային միջոցառումները ուրվագծող և դրանք կառավարող մարմինների գործառույթներին: Պետք է նշել, որ «Պաշտպանության մասին ՀՀ օրենքի» 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ի թիվս այլնի Անվտանգության խորհուրդը հաստատում է զինված ուժերի զորահավաքային պլանը[1]: Այսինքն, նշվածից բխում է, որ օրենսդիրը զինված ուժերի զորահավաքային, կիրառման, ծավալման, զարգացման պլանների հաստատման իրավասությունը վերապահել է անվտանգության խորհրդին: Այլ խոսքով ասած՝ անվտանգության խորհուրդը այն մարմինն է, որը իրավական տեսանկյունից պարտավոր է սահմանել պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները: Այս համատեքստում անվտանգության խորհրդի կողմից զինված ուժերի զարգացման պլանի մշակման գործընթացը ենթադրում է, որ առաջնային սերտ համագործակցություն պետք է լինի պաշտպանության նախարարության և Գլխավոր շտաբի հետ, քանզի հենց թվարկված մարմիններին են հայտնի պատերազմական բնույթի փոփոխությունների և պաշտպանական հնարավորությունների, ինչպես նաև ռազմական գործողությունների իրականացման նոր տեխնոլոգիաների արդիականացված տեսակների առանձնահատկությունների մասին: Մյուս կողմից, Անվտանգության խորհուրդը զինված ուժերի զորահավաքային պլանը հաստատելիս, կարևորելով տնտեսության զորահավաքային ներուժի առավելագույն ընդլայնումը տնտեսության արտադրական ներուժի մեծացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծման, գիտակրթական և գիտահետազոտական ոլորտների և այլ բնագավառների հետ, պետք է ակտիվ կերպով համագործակցի թվարկված գործառույթների իրականացումները մշակող, համակարգող գերատեսչությունների հետ:

---

[1] *Տես՝ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 2017, http://www.irtek.am/views/act.aspx?aid=150214*

Պետք է կարևորել, որ համաձայն ՀՀ վարչապետի 19.06.2018 թվականի № 802-Լ որոշման 5-րդ կետի՝ պաշտպանության նախարարն է ի թիվս այլի Անվտանգության խորհուրդին ներկայացնում զինված ուժերի ծավալման, զորահավաքային, կիրառման, Հայաստանի Հանրապետության տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանները[1]: Այսինքն, զորահավաքային պլանի մշակման և ներկայացման իրավունքը դե յուրե (de jure) վերապահված է պաշտպանության նախարարությանը՝ ի դեմս նախարարի: Մինչդեռ, մեր գնահատմամբ զինված ուժերի զորահավաքի պլանավորման մշակման գործընթացում պետք է ակտիվ լինի ոչ միայն պաշտպանության նախարարությունը, այլ նաև տարբեր գերատեսչություններ իրենց իրավասության շրջանակներում՝ ըստ ոլորտների: Հարկ է նշել, որ պաշտպանության նախարարությունը զորահավաքային պլանը մշակելիս չի կարող ավելի առարկայական պատկերացումներ կազմել զորահավաքի տնտեսական ասպեկտների կազմակերպման և մեխանիզմների ներդրման վերաբերյալ, օրինակ՝ տնտեսական ներուժի, բնակչության կենսամակարդակի բարձրացման, ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծման և այլ տարաբնույթ հարցերի վերաբերյալ: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ պաշտպանության նախարարության խնդիրը ըստ էության ոչ թե զորահավաքի տնտեսական պլանավորմամբ զբաղվելն է, այլ զինված ուժերի զորահավաքի ռազմական պլանավորումն ապահովելը: Հետևապես, այս առումով կարևորում ենք, որ զինված ուժերի զորահավաքային պլանը մշակվելիս ինտենսիվորեն ներգրավված լինեն տարբեր գերատեսչություններ՝ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներով: Ընդ որում, գտնում ենք, որ ներգրավվածությունը պետք է լինի ոչ թե Անվտանգության խորհրդի կողմից ընտրողաբար, այլ իրավական տեսանկյունից ամրագրված եղանակով՝ հետագայում ավելորդ բարդություններից ու խառնաշփոթմունքներից խուսափելու նպատակով: Այսինքն՝ օրենքով կամ ենթաօրենսդրական իրավական ակտով պետք է ամրագրվի, թե զորահավաքի պլանավորման գործընթացում, որ գերատեսչության առջև ինչ խնդիր է դրվում և ինչ ժամկետում պետք է համապատասխան ոլորտի գերատեսչությունը կատարի իր առջև դրված խնդիրը (մշակի իր ոլորտին անռչվող զորահավաքի պլանավորման գործընթացը, ստեղծի համապատասխան մեզանիզմներ և այլն) և այն ներկայացնի կամ պաշտպանության նախարարություն՝ կանոնակարգման նպատակով մշակելու և Անվտանգության խորհրդին ներկայացնելու համար, կամ միան-

---

[1] *Տես՝ Անվտանգության խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին ՀՀ վարչապետի որոշում, 2018, https://www.arlis.am/documentView.aspx?docID=123213*

գամից ներկայացվի Անվտանգության խորհրդի աշխատակազմ և վերջնական կանոնակարգվի անվտանգության խորհրդի աշխատակազմի կողմից: Այլ խոսքով ասած՝ տնտեսության զորահավաքային նախապատրաստությունը և զորահավաքը ենթադրում է համապատասխան իրավական բնույթի փաստաթղթի ընդունմամբ և/կամ լրացմամբ պաշտպանության նախարարության համագործակցություն ֆինանսների նախարարության, էկոնոմիկայի նախարարության, պետական եկամուտների կոմիտեի, Ռազմաարդյունաբերական կոմիտեի հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսության զորահավաքային նախապատրաստությունը և զորահավաքը կրում են համընդհանուր բնույթ, շոշափում պետական և մասնավոր հատվածների շահերը՝ կոչված լինելով ապահովելու ազգային անվտանգության ապահովումը: Հետևաբար, զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի կազմակերպման արդյունավետությունը ապահովելու համար անհրաժեշտ է այդ ոլորտում բարելավել օրենսդրահիրավական կարգավորումը: ՀՀ տնտեսության մոբիլիզացիոն նախապատրաստության և մոբիլիզացիայի օրենսդրահիրավական կարգավորումներն ունեն բարելավման կարիք: Օրենսդրահիրավական փոփոխությունները պետք է կրեն համալիր բնույթ, վերաբերեն ինչպես ինստիտուցիոնալ փոխգործակցության ամրապնդմանը, այնպես էլ տնտեսական ներուժի ընդլայնմանը և նպաստեն մեր երկրում բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Գրականություն

1. **Mkrtchyan Shahen**. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian).
2. **Avetisjan Grant**. "Jetnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, ["Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian).

Հոդվածը տպագրության է երաշխավորել տնտեսագիտության և կառավարման ամբիոնը: